ՏԱՐԱԶԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԸՆԴԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

№ 2 կիրակի յունուարի 23 | *հրատարակ տարի 1894*



Գեղամի վանքը Քոհիայիի Առնուազդում

ԳԱԼԻԼԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ *)

* *
*

Աշնանային մի քաղցր և պերճ օր եկեղեցու բակը մի հետաքրքիր տեսարան էր ներկայացնում: Արևի տակ նստած էին մի խումբ մարդիկ և հանդարտ խոսում էին: Պրանք ժողովրդի հասարակ դասից էին, իսկ մեծամեծները խմբած էին իրանց առաջ: Այդտեղ էր և մի պարոն, որ նոր էր եկել և հետաքրքիր էր մարդկանց կարևոր գործի համար: Պարոնը լեհական տեսուչ էր, որ տաքացած բացատրում էր մեծամեծներին ուսումնարանի նշանակությունը, օգուտը: Համառ ձայնությունը դեռ առաջ էր կայացել և այժմ պետք էր հոգաբարձուներ ընտրել վաճառած դպրոցը նորից բանալու համար:

Եղած մարդկանցից ամեն հետաքրքիր էր եղած: Եկել քահանան, ժողովը բացվեց: Տեսուչը մի կարճ ատենաբանություն արաւ, յորդորեց բոլորին ընտրել այնպիսի մարդկանց, որոնք հեռանդուռ են, որոնք հետևանում են լել ինչ է հարկաւոր անել, ինչ կարիք ունի դպրոցը և այլն: Խօսքը հասցնելով համերաշխության, պ. տեսուչը ասաց և հատատեց որ առանց համերաշխության գործ չի առաջանալ, որ ամբողջ հասարակությունը պիտի հոգաբարձուներին աջակից, պիտի նրանց հետ միասին գործէ իր դպրոցի օգտին: Ապա նա հրաւիրեց ընտրություն կատարել: Բայց տեղից շարժուղներ չեղան. միմեանց երեսի մոխիկ էին տալիս և լուռ էին: Անգամ բողչեներ: Տեսուչը նորից կրկնեց իր հրաւէրը, քահանան օրհնելով հանդիսից որ չուտ անեն, վերջացնեն, ինքը «օրէնք կատարելու» պիտի գնայ: Բայց նոյն լռությունն ու անշարժությունն էր տիրում հաւաքականների մէջ: Լուռ էր Իսրայէլ ազան, լուռ էին մեծամեծները, լուռ էր մեռած և ժողովուրդը:—

Այդ ժամը դրությունը վերջ դրաւ ոստիկանատան հին պաշտօնեայ Բալդասարը, որ այժմ չէր ծառայում, այլ մարդկանց համար լինդրագրեր էր յօրինում շատ էժան գնով: Նա առաջ գալս եկաւ, ձեռքը դրաւ սրտին և խոնարհ ու հեզ դէմքով դարձաւ դէպի ընտրականները և ասաց ջերմեռանդ ու համեստ կերպով.

—Մարդիկ, ինչ ենք անգործ մնայել, կանգնել: Ամենքս գործ ունենք: Ընտրենք առաջ մեր պատւելի Իսրայէլ-ազային: Նա մեր իշխանն է, նա կարող է մեծ ու փոքրի հետ խոսել, վերջապես նա մեր տեղի առաջին մարդն է:

Ընտրականների խմբի մէջ մի խոսք ազմուկ անցաւ: Անգրագէտ խոսքերն ու ձայները իրարանցական էին, հատատատում էին Բալդասարի ասածը: Մեծամեծներից երկուսը մօտեցան քահանային, յայտնեցին որ ժողովուրդը Իսրայէլ ազային է ուզում: Ժողովուրդը լուռ էր: Միաձայն ընտրությունը կատարվեց...

Իսկ նա, որ ընտրվեց այդպէս, կանգնած էր ամենքի առաջ և ծիծաղում էր: Նա յայտնեց որ ինքը չի կարող այդ պաշտօնի տէրը դառնալ:

—Ընտրեցէք լաւ մարդկանց, ասաց նա.—ընտրեցէք այնպիսիներին, որոնք հասկանում են լել ինչ է ուսումը. իսկ ես զօրավ եմ անունս գրում, գրքի երես չեմ տեսել:

Ամենքը ծիծաղեցին համարելով այդ խոսքերը ազայի անսպառ հանաքներից մէկը:

—Մեզ համար ընդունելի է, ձայն ունց մեծամեծներից Թարսոս ազան:

Ամբոխը մի խառն ազազակով հատատեց այդ: Իսրայէլ ազան դարձաւ լեհական տեսչին.

—Սրանք գործ ուսողներ են, ասաց նա.—իսկ դու, պատւելի, լաւ ես հասկանում: Իմ գործը չէ, ես այդպիսի քաններից հասկացողություն չունեմ: Ես միայն լաւ հայհոյել գիտեմ: Սրանից օգուտ կայ ուսումնարանից:...

Տեսուչը սխրանալ չարժեց գլուխը: Իսկ ծիծաղը եւ քրքիջը նորից բարձրացան ամբոխի մէջ: Ամենքը հետացած էին ազայի այդ սրամիտ հանաքների վրայ:

—Մեզ համար ընդունելի է, նորից կրկնեցին մեծամեծները: Իսկ հասարակ դասից մի քանիսը մօտեցան քահանային և տեսչին, խնդրեցին որ գրեն, վերջացնեն:

—Զարմանալի մարդիկ են, չարունակեց Իսրայել ազան.—ինձանից էլ խելքի բան հարցնեն.. Ի՞նչ են տեսել իմ մէջ որ ամեն տեղ ինձ են առաջ քաշում: Հաւատում ես, պատւելի, կեանքումս մի խելօք բան արած չեմ և չեմ կարող անել: Ես ուստ չեմ ասում... Ես յիշող ուղղ մարդ եմ... Երևի, ուզում են որ ուսումնարանում էլ յիշողներ տամ:

Այս անգամ հո ամբոխի ծիծաղը բոլորովին անզուսպ էր: Մեծամեծներից երկուսը կարմրել էին ծիծաղից, միմեանց խփում էին, հետացած ցոյց էին տալիս ազային, կրկնում էին նրա ասածները: Եւ շատերը, համարեա արտասուելով շատ ծիծաղից,

*) Տես «Տարազ» № 1.

զոհում էին ազգին, ուխի բարձր ձայնով ասում էին որ հէնց այդպիսի խօսքերի համար անպատճառ նրան են ուղում:

Օրայ հերոսը մնաց լուռ: Նրա անունը գիտէին: Պէտք էր երկու մարդ էլ բնաթափան գործը, ինչպէս երևում էր, կատարել էր հետաքրքրող նշանակութիւնը: Մի քանիսն արդէն հետաքրքրում էին և նախապատ քահանան զուր էր յայտարարում որ սպասեն, վերջացնեն: Նրա դժգոհութիւնը բացարձակ կերպով էր արտայայտում:

—Տնաշէններ, խնդրեցինք որ շուտ վերջացնէք. մենք էլ գործի տէր մարդիկ ենք, ասաց նա:

—Այդպիսի հանդամանքում էլի ես, ասաց մէկը դուրս գալով ժողովրդի միջից, մօտեցաւ քահանային, սկսեց նրա ականջին մի ինչ որ բան փսփսալ:

Այդ մարդու անունը Յովհաննէս էր: Եվէ պատահական խուլ անկիւնին երկնքից չնորհուած լինէր իր մարմինը տեսնելու կատարելութիւնը, նա լաւ կը տեսնէր որ շատ խոցկր կան այդ մարմնի վրայ, բայց ամենից խոշորն ու վատը այդ Յովհաննէսն է, որին շատ շատերը Պև-Յովհաննէս էին կանչում: Դա միշտ ձեռքը սրտին դրած, միշտ ծիծաղող, միշտ ուրախ մի մարդ էր, որ սոցիալ մեծ ընդունակութիւն ունէր, որ շուտով հաճելի էր դառնում մարդկանց, որ օրհնան հաղար անգամ երդում էր ուտում լվէ ինքը շատ լաւ մարդ է, լվէ նրա վրայ է միշտ Յովհաննէս Մկրտչի և Հուսատուչի օրհնութիւնը: Մեծի առաջ—խոնարհ ծառայ, աշնութիւն. հաւասարակիցի մօտ—բարի կամեցող եղբայր, ցաւակից. իսկ ցածրերի վերաբերմամբ—պիտառատ հայր, կարեկից, խրատատու: Այդ կաչինները օրհնան հարիւր անգամ փոխել պիտէր նա. բայց՝ ոչ մի կաշու տակ չէր մոռանում իր շանը. և հարցահարում էր գոհատանքի աչք պրած ազգին, խաբում էր իրան հաւատացին եղբայրական խօսքով, կեղեքում էր ցածրին բարձր կանչածի իրաւունքով ու պէնքով: Նա կարճ միջոցում հարստացել էր, բայց մարդկանցից ծածուկ էր պահում իր հարստութիւնը. նկատել էր որ միջին դրութեան մէջ պահելով կարելի է աչ ու ձախ հնձել:

Նրա փսփսոցը քահանայի ծիծաղը շարժեց: Եւ նա, շարունակելով ծիծաղել, պրեց այն, ինչ որ թելադրեց Յովհաննէսը: Այնուհետև նա մի մի բերում էր մարդկանց և ստորագրել էր տալիս խմբագրին:

—Ի՞նչ պատահ, հարցրեց Իսրայէլ-ազան:

—Դուք էք, Օհան Մամիսոնեանցը, Սարգիս Չատախեանցը:

—Օհաննը...

Եւ Իսրայէլ ազան իր սրտաճիկ ձայնով այնպէս ծիծաղեց, որ ցրտով մարդկի նարից հատաբեցան նրա կլիները:—

—Սա էլ, այս ջաղացպանը... կրկնում էր նա, ձեռքով ցոյց տալով կապիկի կերպարանք ունեցող մի բիծաս մարդուն, որ կանգնած էր նրա մօտ, նայում էր նրա ճակատին և ազուշի պէս ժպտում:

—Հաւատա, պատուելի, չարունակեց ազան.— հինգ տարի առաջ ջաղացպան էր... Դու չես հաւատալ, ահա այսքան մարդկի պիտին... Տեսնում ես. ահա սա ինքն է որ կայ. ուխ պակաս բան չունի: Խելք ես տարցնում... խելքը սրանից խլռում է:

Ամենքը ծիծաղում էին: Յովհաննէսը ձեռքը սրտին դրած մօտեցաւ և ասաց.

—Ձչմարիտ ես հրամայում, բայց վախ ունի...

—Չա, այդ մէկին արդար է: Հրաչքով հարստացաւ, պատուելի տեսուչ. ջաղացպան էր, յանկարծ փոդատէր դառաւ:

—Սրանց խելքի վախ չեն աչխատիլ, ուխտյրից Յովհաննէսը:

Իսրայէլ ազան լուռ, պատասխան չը տուաւ: Իսկ նոր ընտրած Օհանը ապշած, հիացած նայում էր սրա ու նրա դէմքին և ժպտում էր:

—Գնանք, Օհան, ասաց Իսրայէլ ազան. մէկ իմ խելքը, մէկ էլ քոնը... Օ՜, եվէ մնանան, նոր արեգակ կը ստեղծեն:

Ընտրութիւնը վերջացաւ: Թեմական տեսուչը մի քանի անգամ ծանր խմափոխութիւն պլուխը, դառնութեամբ ժպտաց և իսկոյն հեռացաւ: Իսրայէլ ազան գնում էր մարդկանցով շրջապատած: Նա հայհոյում էր իր նոր պաշտօնակիցին. և այնպիսի տպաւորութիւն էր նա ստեղծում կծու, սարսափելի բառեր, այնպիսի ճարտարապետութեամբ էր հիւսում իր շարադրութիւնը, որ նրա հետ գնացողները կարմրում, խուսափում էին ծիծաղից, խոսքին հիացմունքից չը գիտէին ինչ անեն և բռնում էին ազգի խիղից, քաշում էին, չոչափում էին նրա հանդերձի ծայրերը: Անց ու դարձ անողները կանգ էին առնում այդ սրտաուչ տեսարանի առաջ, նայում էին և լուռ ժպտներով ուղեկցում էին մեծամեծներին:—

Այդպէս վերջացաւ այդ օրը:

Լ. Ե Ո

(Կը շարունակուի)

ՀԻՅՆԻՀԻՅ

Երազումս ես քաց եղայ,—
Տեսայ ևորաև դազաղում...
Աբռաաուքըս, երբ արթևացայ,
Դեռ հոսում էր ու հոսում:
Երազումըս ես քաց եղայ,—
Տեսայ, ևաև իևձ մոռացած...
Աբռաաուքըս, երբ արթևացայ,
Դեռ հոսում էր վարարած:
Երազումըս ես քաց եղայ,—
Տեսայ, ևաև իևձ գըբաված...
Բայց արցունքըս, երբ արթևացայ
Դեռ գալիս էր ու գալիս:

Ջ. ԲԱԼՈՒՉԵԱՆ

ԿԱՄԻԼ ՖԼԱՄԱՐԻՈՆԻ

Ուրանիա

(Uranie)

ԵՐԿՆԴԻՐ ՄՈՒՍԱՆ

II

Այդ ժամանակ ես տեսի Երկիրը որ պըտուտ էր անասմանութեան անդնդային խորութեան մէջ. պիտարանի գմբէթները, լուսատուած Պարիզը արագաբար իջնում էին. ինձ անչարժ պահով հանդիպեմ, ես նոյն տպաւորութիւնն ղգացի, ինչ որ մարդ կարող է ղգալ օդապարիկի մէջ, երբ բարձրանալով օդի մէջ՝ տեսնում է Երկիրը իբր թէ իջնում է: Ես բարձրանում էի, երկար ժամանակ բարձրանում էի, տաբուելով մի մոգական ճախրով դէպի գինիտը: Ուրանիան իմ մօտ էր, մի քիչ աւելի բարձր, քաղցրութեամբ նայելով ինձ և ցոյց տալով ներքևի թագաւորութիւնները: Օրը ծագել էր: Ես ճանաչեցի Ֆրանսիան, Հռենոսը, Գերմանիան, Աւստրիան, Իտալիան, Միջերկրականը, Սպանիան, Ատլանտեան Ովկիանոսը, Անգլիան: Բայց այդ բոլոր գաճաճային աշխարհագրութիւնը շատ շուտ անհետանում էր: Շուտով երկրագունդը վերածուեց լուսնի վերջին քառորդում ունեցած չափսի մեծութեան, չեզոք փոքր լիալուսնի:

«Ահա, ասաց ինձ Ուրանիան, այդ հաշակաւոր երկրագունդը, որի վրայ յուզւում են այնքան կրքեր և որն իր նեղ շրջանի մէջ պարունակում է այնքան մրիւոն էակների մասնաւորները, որոնց տեսութիւնը չի անցնում միւս կողմը: Նայիր լմե ինչպէս նրա ամենչնչին մեծութիւնը նւազում է արբան մեր տրիւոնը լայնանում է: Մենք արդէն Եգիպտան չինք ջոկում Ասիայից: Ահա Կանտան և Հիւսիսային Ամերիկան: Որքա՜ն փոքր է այդ ամենը:

Լուսնի մօտից անցնելով, ես նշմարել էի մեր արբանեակի լեռնոտ կողմերը, որոնց գագաթները շողում էին լոյսով, իսր հովիտները, տաւերով ծածկած և կը ցանկայի կանգ առնել այնտեղ, մեր դրացի բնակութիւնն աւելի մօտից հետազօտելու համար. սակայն, Ուրանիան, արհամարհելով մինչև անգամ մի սոսկ նայուածք ձգել նրա վրայ, քաշ էր տալիս ինձ արագ թռիչքով դէպի աստղային աշխարհները:

Շարունակ բարձրանում էինք: Երկիրը, նահանջելով հետզհետէ որչափ մենք նրանից հեռանում էինք, ի վերջոյ մի հասարակ աստղի երևոյթը առաց, փայլում էր արեգակային լուսատուութեամբ պատսպրի և սև անհունութեան ծոցի մէջ: Մենք մեր երեսը դարձրել էինք դէպի Սրեգակը, որ պայծառ փայլում էր ամպերի մէջ աւանոց լուսատուելու նրան և մենք նրա հետ միասին տեսնում էինք և աստղերը ու մոլորակները, որոնք չէին ջնջւում արեգակի լուսից, չը նայելով որ նա չէր լուսաւորում անթերևելի եթերը: Հրեշտակային աստուածուհին ցոյց տուաւ ինձ Փայլածուն (Մերկուրին), Սրեգակի դրացութեան մէջ, Սրուսեակը, որ փայլում էր ներհակ կողմից, Երկիրը, հատասար Սրուսեակին իր երևոյթով և փայլով, Մարսը կամ Հրատը, որի միջօրէականները և ջրանցքները ճանաչեցի, Լուսնմատը (Խուպիտէր) իր չորս արտպին լուսիններով, Երեակը (Սատուրն), Ուրանիոնը...

«Բոլոր այս աշխարհները, ասեց ինձ Ուրանիան, որոնք հոլուում են արագութեամբ Սրեգակի շուրջը, պահում են դասարկութեան մէջ նրա ձգողական զօրութեամբ: Այդ մի ներդաշնակ խումբ է, որ թատերում է կենդրոնի շուրջը: Երկիրը մի ծիսան կղզի է, այս մեծ արեգակային հայրենիքի մի պիտիկը և այդ արեգակային կայսրութիւնը ինքն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի պատառ աստղային անհունութեան ծոցում»:

Մենք բարձրանում էինք միշտ: Սրեգակը և

իր համակարգումիւնը արագութեամբ հետանում էին։ Երկիրը այլ ևս մի կէտ էր ներկայացնում։ Նայնիսկ Լուսնիմազը, այդ հսկայական աշխարհը, նաւած երեսց ինչպէս Հրաալը և Ալպսեռակը սառնալով մի փոքր կէտի երեսյթ, մի քիչ լաչոր էր Երկրային կէտից։

Մենք գիտէինք Երեակից, որ զօռեկապած էր իր հսկայական մանեակներով և որի վիպութիւնը միայն բաւական է ապացուցանելու տիեզերքի մէջ տիրող անհուն և անբերակայելի բազմազանութիւնը։ Երեակը, որ ինքն միայն մի ճշմարիտ համակարգութիւն է, իր հիւղներից կազմուած մանեակներով, որոնք ֆուտալում են սարսափելի արագութեամբ և իր ութ լուսիններով, որոնք ընկերանում են նրան իրրև մի երկնային պահակախումբ։

Այրան որ բարձրանում էինք, մեր արեգակը նւազում էր մեծութեամբ։ Շուտով նա աստղի աստիճանին հասաւ, յետոյ կորչրեց բոլոր վեհափառութիւնը և աստղային ժողովրդի վրայ ունեցած բոլոր գերազանցութիւնը և միւս աստղերի պէս հազիւ փայլող մի աստղ դարձաւ։ Ես գիտում էի այդ աստղազարդ անհուն տարածութիւնը, որի ծոցում մենք բարձրանում էինք չարունակ և ես աչքաստում էի ճանաչել աստեղատունները, բայց նրանք գլխի կերպով փոխում էին իրանց ձևերը այն պէրսպէկտիւի պատճառով, որ իմ ճանապարհորդութիւնս պատճառում էր։ Կամենածիրը գլորուել էր մեր ճախրի ներքև իրրև անեզրութեան խորքի մէջ ծփուող արեգակների հեղեղի մի ջրվէժ. այն աստղները, որոնց մօտենում էինք, նրանցից լոյսը թափւում էր ֆանտաստիկական ճաճանչներով, և նրանք արձակում էին ոսկեայ և արծաթեայ ցոլացումներ իրրև լոյսի պետեր, կուրացնելով մեզ, ճանճչաւոր փայլով։ Ինձ թւաց թէ տեսնում եմ մեր արեգակը, որ անզգայաբար մի բոլորովին փոքր աստղ էր դարձել, միանում է Կենտաւր (Յուլ) աստեղատան հետ, մինչդեռ մի ուրիշ լոյս, աղօտ, կապտաւուն և բաւական օտարոտի գալիս էր այն կողմից դէպի ուր տանում էր ինձ Ուրանիան։ Այդ փայլը ոչինչ երկրային բան չունէր և նրա նման ևս ոչինչ չէի տեսել երկրի կողմերում...

Փրանս. Թարգմ. Հ. ԱՒԱԶԵԼՅԱՆ

(Կը շարունակուի)

ՓԷԼԻԷՏՕՆ

Ծատրագրիները հայերի մասին այն զաղափարն են կազմել, թէ այդ ազգը զարմանալ չը գիտէ։ Սխալ թէ ուղիղ—այս կարծիքն է տիրում մեր մասին։ Ուստի Թիֆլիսի հայկական ընկերութիւնները, կամենալով ապդին մի մեծ ծառայութիւն անել, վճռել են բնաւ ջնջել այդ յամառ կարծիքը։ Իրաւ, կարծեմ ոչ մի տարի այդ ընկերութիւնները հասարակութեանը այնքան չեն զարմացրել, որքան այս տարի։

Հայուհիների վարչութիւնը պարեց և ոտոտաց Սէրպիեվսկայա փողոցի պլուտօկրատական խոհանոցի օգտին, հրատարակչական ընկերութիւնը պարեց և թռչկոտեց Շարամէ տպարանատիրոջ, Վիսոտսկովսկի թղթավաճառի և Եղիա կալմարարի օգտին։ Մնում է Բարեգործական Ընկերութիւնը—նա էլ յունուարի 30-ին պէտք ոստոստայ ի մեծ ուրախութիւն Դերմանիայում ուսանող «աստուածաբաններին»։

Իսկ մենք մահկանացուներս պէտք է տեսնենք և զարմանանք։ Ես ներկայ էի արդէն կայացած երկու երեկոյթներին։ Խոստովանում եմ հայուհիների պարահանդիսում ևս ասելի զարմացայ, քան թէ հրատարակչականում։ Եւ այդ զարմանալի չէ. միթէ մի ինչ-որ հրատարակչական ընկերո թիւն, որի վարչութեան մէջ ոչ մի հատ տատը փուխանոց բանկիր չը կայ, իր կշիռով կարող էր մրցել հայուհիների ընկերութեան հետ։

Այո, չատ զարմալի էր հայուհիների բալը։ Այստեղ ներկայ էր հայ հասարակութեան ծաղը, ուչ . . . խղը, այսինքն ամենաչատ մասը։ Ներկայ էին կալալատուվեան և կուլատուվեան տակառատների հերոսները։ Ներկայ էին բանկային և ձկնային թագոսները իրանց ընտանիքներով, որոնց արիստոկրատիական վքւած պրետենզիան հիմնւած է իրանց բուն մեչչանական ծագման վրայ և որոնք այնքան մեծ կարծիք ունին իրանց սալոնական կրթութեան, ճաչակի, ձևերի և պրացիայի մասին, որքան իսկապէս Նհովան զրկել է նրանց այս բնածին և ստացական տուրքերից։

Երեկոյթի կարգադրիչները, հարկաւ, գոհ էին իրանց հիւրերով, վասն

(Նկարում պատկերված) Ծիծաղաշարժ դեպքերից մեկի մասնակիցները

զի հանդիսի ղեկասուը փայլը նրանք էին կազմում, այսինքն նրանց սևամորթ պարահոցների և կարմրակաշի բազուկների ոգեմանդնները և ալմազները։ Այո, ուր որ այդ երեկոյ նայում էի—նուրբ ճաշակ և հիանալի դրացիա էի տեսնում։ Կոլորիկ, ձմեռուկանման էակները փայլում էին նազելի, ինչպես բազեր, աչ ու ձախ ժոռտանելով, իսկ նրանց պարմ՛ները, խօսո՛ները, ձեռքը, ժպի՛տը . . . բոլորը, բոլորը աքանչելի էին։ Եւ ամենքը գիտեն ճաշակով հագնուել։ Սեամորթը գիտէ, որ իր սեռութիւնը աւելի պարզ կացուցանելու համար—պէտք է սպիտակ զոյնի հագուստ հագնի, և նա այդպէս էլ հագնուել է։ Կարճահասակը գիտէ, որ իր հասակը աւելի կարճ ցոյց տալու համար պէտք է հագնի լայն թևերով և բազմածալ կրծքով հագուստ, և նա այդպէս էլ հագնուել է։ Նիհարը գիտէ, որ տղամարդկանց հրապուրելու համար պէտք է ի ցոյց հանի իր ուշեզանման ու սև թիկունքները, և նա հագնուել է դէկոլտէ։ Եւ մէջէ այդ բոլորը նուրբ ճաշակի ապացոյցները չէին . . .

Հրաապարակչական ընկերութեան երեկոյթում հայ հասարակութեան հէնց այդ երևելի դասակարգն էր ցայտակայ։ Այստեղ աչքի էին ընկնում մեծ մասամբ երիտասարդ պարոնները և երիտասարդ օրիորդները։ Էհ, ինչ զարմանքեան կարող էին պատճառել ինձ երիտասարդները։ Եթէ կար թարմութիւն և աշխոյժ—չը կային հայուհայց երեկոյթի պայծառն ադամանդները և ծանր թաւշեայ հագուստները։ Եթէ լսում էին անկեղծ ծիծաղ, բուռն զարմանօսութիւն, և անընդհատ սրամտութիւններ—չէին լսում ուժով բերուած սալանների չոլօրների այն ղընդոցը և Սօլօմակի տակտների այն ծանր և սոսկալի ինչ-ինչոցը, որ հայուհայց երեկոյթին մի առանձին չուք էին տալիս։ Եթէ հրաապարակչական ընկերութիւնը, իր հիւրերի դէմքերի վրայ դիմակներ չը տեսնելով, ինքը արդէն կատիլիոնին մասնակցողներին դիմակներ հագցրեց—հայուհիները այդ արևմտեան ձեռնարկութեան կարիքը չը զգային, վասն զի նրանց կատիլիոնին մասնակցողները իրանց սեպհական դիմակներով էին եկել։

Միակ զարմանալի բանը հրապարակչական ընկերութեան պարահանդէսում ինձ համար դարձեալ հայուհայց ընկերութեան մի քանի տարիքուտներն էին։ Ես տեսայ մի անկոչ արիստոկրատկա, որը ցոյց տալու համար, թէ երեկոյթի հետ ինքը ոչինչ կապ չունի, մի սպասի թևը բռնած՝ չարունակ ժպտում էր դէս ու դէն պտտելով։ Տեսայ նոյնպէս մի կատակասէր հայ ֆելիետոնիստ, որ հայուհիների երեկոյթին փրակով էր եկել, իսկ հրապարակչականի երեկոյթին հնամաշ սիլըխովով։ Ինձ համար դա չատ հասկանալի է. արհեստակից իր պապի Նոր—Զուղայից բերած դոկումինտների հիման վրայ վաղուց իրան արիստոկրատ է համարում։ Հարկաւ, նա պէտք է ծիծաղէր դէմոկրատիկ համարուած մի ընկերութեան պարահանդիսի վրայ, թէև հէնց այդ դէմոկրատիկ ընկերութեան կառավարչուհին է իսկական արիստոկրատկա կրթութիւնով, թէ ախտղտով թէ ծագումով, թէ խելքով և թէ ճաշակով։

Հ ո ր ի կ

ԳԵՂԱՐԻԵՍՏ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

Մեր ասածից դիւրին է եղրակացնել, որ ապագնդաւոր դերասանը, եթէ ուզում է արուեստ կոչելու բանին արժանանալ—միշտ պէտք է աշխատէ կրթել իր միտքը և հոգին, զարգացնել իր խելքը և նրբացնել իր զգացմունքները։ Իսկ սրա համար բաւական չէ, որ նա միայն բեմական կրթութիւն ստանայ, բաւական չէ մինչև անգամ, որ նա ուսումնասիրէ իր ներկայացրած տիպերը։ Այլ նա պէտք է և՛ ծանօթ լինի ժամանակակից բեմի պահանջներին, ուսումնասիրի կլասիկ և նոր բնաբերասարները, տեղեակ լինի առ հասարակ գեղեցիկ գրականութեանը, մի խօսքով, ծանօթանայ գեղարուեստի հետ ընդհանրապէս։

Այստեղ տիտղոս չիշեցի մի դէպք, որ ատելորդ չեմ համարում առաջ բերել իբրև մի գեղեցիկ օրինակ մեր դերասանների համար։ Մի քանի տարի սրանից առաջ Ռօսսին առաջին անգամ Թիֆլիսում խաղում էր Աբբայ Լէր։ Պիէսի առաջին գործողութիւնից յետոյ տեղական մի յայտնի հրապարակախօս անցնում է կուլիսների հետ բեմական հանճարի հետ ծանօթանալու։ Ռօսսին հարցնում է նրան, արդեօք ինչպէս հասանից նրա խաղը։ Եւրոպական կրթութիւն ստացած հրապարակախօսը նկատում է. թէ իր կարծիքով արտիստը չը պիտի այնպէս արագ և կատարած բեմ վազէր Լիլի դէմում, ինչպէս այդ արեց Ռօսսին։ Խաղացի արտիստը ժպտալով հրաւիրում է հրապարակախօսին նրան տեղ և սկսում է առանձակ դրական-նական փաստերով, հոգեբանօրէն և փիլիսոփայօրէն բացատրել իր խաղի ճշդրտութիւնը։ Հրապարակախօսը, որ կարծում էր դործ ունէ լոկ մի բեմական արտիստի հետ, ապշած է մնում իր խօսակցի դրականական ընդարձակ զարգացման վրայ, մի դեղեցիկ լեկցիա է լսում նրանից և ամաչելով դուրս գալիս։

Այսանի բան է, մենք չենք կարող այդչափ զարգացում սպասանջել մեր դերասաններից, որոնք, դժբախտաբար, զրկուած են եւրոպական դերասանների կրթական միջոցներից։ Բայց կան բաներ, որ իրաւունք ունենք պահանջելու, օրինակ, այն աշխատասիրութիւնը, այն ինքնազարգացումը, այն գեղարեստական ինքնակրթութիւնը, որ ունէր հանգուցեալ Ադամեանը, որի հանդամանքները ոչնչով լաւ չէին այժմեան հայ դերասանների հանդամանքներից։ Այստեղ մեր խօսքը ապաղանդի մասին չէ, այլ կրքի մասին, որից ծագում է արտիստի մէջ ինքնակրթութեան փափագը։ Հարկաւ մենք չենք պահանջում այժմեան դերասաններից, որ Ադամեանի չափ քանքարաւոր լինին, այլ պահանջում ենք, որ դէթ նրա կիսի չափ ձգտեն կրթել իրանց միտքը։ Հէնց այդ ինքնակրթութիւնն էր, որ Ադամեանին օգնեց արտիստ դառնալ այս բառի ամենաընդարձակ նշանակութեամբ։ Իբրև դեղարեստական ճաշակի տէր մարդ, նա չէր բաւականանում միայն իր դերերը ուսումնասիրելով։ Նա գիտէր, որ մարդկային հագուս զգացմունքների թարգման լինելու համար պէտք է ուսումնասիրել այն բոլոր միջոցները, որ օգնում են այդ զգացմունքների պարզելուն։ Ահա ինչու նա ուսումնասիրում էր բոլոր դեղարեստները, բեմական արեստից դուրս միւս արեստների վերաբերմամբ լինելով դիլետանտ։

Այժմ քննենք մեր այժմեան դե-

թատեռներին և դերասանուհիներին. արդեօք չատերը նրանցից բանից դուրս մի բան պիտեն, և՛ պիտեն արդեօք բանը։ Նահապետը նրանցից որ և է զաղափար ունեն ընդհանուր գեղարուեստական դրականութեան, այլ զոնէ թատրոնական դրականութեան հետ, չատերն են զոնէ հասկանում իրանց ներկայացրած տիպերի և նրանց հոգեվիճակների միտքն ու զաղափարը։ Ներկայացրած այս հարցերին մեծ մասամբ միայն բացասական պատասխան կարող ենք տալ։ Այո, մեր դերասանները ոչ միայն գեղարուեստական զարգացում, ոչ միայն գրական-եանական ինքնակրթութիւն չունին, այլ ընդհակառակն ենք ասում, որ չատ անգամ նրանք ձանձրանում են անգամ այդ մասին խօսել։ Բայց որ ամենացաւալին է, նրանք նեղութիւն չեն կրում մինչև անգամ սովորել այն լեզուն, որով խաղում են, այսինքն այն առաջնական պայմանը, առանց որի ոչինչ չեն կարող անել։ Դա մի ուրուագիծ է, որ գեղարուեստի գնահատողներին ցաւ է պատճառում, մի ցաւ, որ իրանք դերասաններն անգամ, զգալատարար, չեն զգում։

Ինչ է դրա հիմնական պատճառը։ Այն, որ մեր դերասաններից ոմանք բնական ձիրք ունեն, իսկ չունեն բուսական կիրք դէպի իրանց արուեստը, ոմանք կիրք ունեն—ձիրք չունեն, իսկ չատերը ոչ այս ունեն, ոչ այն։ Մենք մասամբ չենք այստեղ անուններ յիշել և առանձին առանձին քննել մեր բնական այժերին, որովհետև անունները միչտ թշնամութիւն են յարուցանում, ասում է լաւինական առածը։ Բայց չենք կարող չը յիշել միայն Հրաչեայեին, որ մի գեղեցիկ ապագայ է մեր ասածին։ Ահա մի դերասանուհի, որ իր առաջադէմ չնորհով կարող էր արտիստ դառնալ, եթէ նա ունենար կիրք դէպի գեղարուեստը։ Բայց նա կիրք չունէ, և պրոնով է բացատրում այն զայրացուցիչ հանգամանքը, որ նա կարողացել է ամբողջ տասներկու տարի առանց բանի, առանց իր արուեստին ծառայելու տալով և այժմ կարողանում է նորից թողնել իր արուեստը։

Այժմ մեր ասածները ամփոփելու համար դառնում ենք մեր բնական այժերին։ Կրկնում ենք, մենք չենք քննել ձեզանից իւրաքանչիւրին, թէև ձեզանից երկու-երեք հոգի արժանի են քննութեան։ Մենք կը դարձնենք ձեր ուշադրութիւնը միայն ձեր ընդհանուր թերութեան վրայ։ Դա աչքատանջութեան, ինքնակրթութեան բացակայութիւնն է, որ խանգարում է ձեր առաջադիմութեանը։ Դուք ծոյլ էք, և այդ ձեզ համար մեծ սխալ է։ Եթէ դուք կամենում էք տասարակ դերասաններից բարձրանալ արտիստի ասպիճանին, պէտք է անընդհատ կրթէք ձեր գեղարուեստական աչխարհը և զարգացնէք ձեր միտքը։ Մի զանգատուէք, թէ դուք միջոց չունէք, այդ զանգատը միայն մասամբ կը լինի իրաւացի։ Կան չատ միջոցներ, որ մատչելի են ձեզ։ Սկսեցէք գեղարուեստական գրականութեան հետ ծանօթանալու համար հարկաւոր է չատ հեռու գնալ, սկսեցէք մանրը իսօսելու համար միջոց չունէք, սկսեցէք բեմական բնազերտուալը ուսումնասիրելու համար խոչընդոտներ կան ձեր առջև։ Բայց դուք ղրանցից ոչ մէկը չէք անում, ահա ինչու ձեր մէջ չէ նկատւում առաջադիմութիւն, ահա ինչու ձեզանից ոմանք ձիրք ունենալով հետզհետէ փոխանակ արտիստ դառնալու՝ սկսում են հասարակ բեմական արհեստաւոր դառնալ։ Թող թատրոնական ամբոխի ծափահարութիւնները և լրագրական անհիմն բնկամները ձեզ չըշլացնեն, աչխատեցէք գոհացում տալ զոնէ այն դերասանական ճաչակին, որ ունէ հասարակութեան չնչին փոքրամասնութիւնը։ Ճաչակաւոր հանդիսականի դիտակցական հաւանութիւն արտայայտող մի ծափը դերազանցէ անկիրթ և անճաչակ ամբոխի ոռոգակներին։ Հակառակ դէպքում, դուք դերասանուհին չէք կարող ծառայել, այլ ամբոխի զուտիկ ճաչակին, որ միչտ թշնամի է բուն գեղարուեստին։

Իսկ մենք չատ ուրախ կլինենք, եթէ մեր նկրկայ բարեկամական նորհանդէսը ձեր վրայ որ և է ազդեցութիւն ունենայ։

ՀԱՅԱՍՏԱՆԱՑԻ

ԹԱՏՐՈՆ

—

Հինգշաբթի, յունուարի 19-ին Արքունական թատրոնում կայացաւ աչխատասէր և անհաղթահարելի դերասան Արքաքսինեանի բենեֆիսը, որին, բացի հայ դերասանական խմբից, մասնակցում էին և՛ ռուսաց օպերային խմբի մի քանի երգչուհիներ և երգիչներ, այն է տիկ. տիկ. Կամիներ, Սնարսկայա և պ. Սանդուրսկիյ։ Ներկայացումը տաւարական էր. խաղացին պ. Սունդուկեանցի «Բանդած Օջախ» կոմեդիայից ու վրաց հեղինակ Յազարևիլի «Ռանուա պիէսից մի մի դործողութիւն։ Բենեֆիցիանտը արտասանեց իր հեղինակած մի մենախօսութիւնը։ Տիկ. Սնարսկայա բուսական գեղեցիկ հայերէն արտասանութեամբ երգեց «Միծնուկ»։ Հասարակութիւնը բուռն ծափահարութեամբ կրկնել տւեց այդ երգը։ Երեկոյթը ընդհանրապես յաջող էր։ Հարկաւ, ամենից չատ յաջողութիւն ունեցաւ բենեֆիցիանտը։

Մենք պ. Արքաքսինին անհանդիստ դերասան համարեցինք ամենալաւ մտքով։ Պ. պ. Աբելեան և Արքաքսեան ամբողջ խմբի մէջ միակ դերասաններն են, որոնք չարունակ աչխատում են իրանց արուեստի վերաբերմամբ չը մնալ միմիայն պատրաստի դրած դերերը կատարող, այլ աչխատում են բարձակոլմանի դասնալ, յօրինելով տեսարաններ, մենախօսութիւններ, կուպլետներ։ Դա զեղեցիկ ուժտանասորութիւն է։ Այդ երեկոյթի մէկ նորութիւնն էլ այն էր, որ պ. Արքաքսեան առաջին անգամ բարբառեց, դուդուկի դաչնակցութեամբ երգեց ուսերէն և հայերէն կուպլետներ։

Թատրոնը դեռևէ լիքն էր։ Պ. Արքաքսեան առաջաւ միքռնի նետերներ։

—

Դերասանուհի տիկ. Հրաչեան, ինչպէս մեզ հաղորդում են, ներկայումս Բաքուում է զտնուում, ուր նա ալտարտասուում է երկու ներկայացում տալ մասնակցութեամբ Թիֆլիսի խմբից հեռացրած Արբուհամեանի։ Անչուշտ Բաքուում հայերն ուժտանիքից աւելի կը գնահատեն դերասանուհու մօտաւորապէս բեմական արուեստ յիչեցնող խաղը։ Թիֆլիսի թատրոնասէր հայերը նախանձելի տեղը չը պիտի ունենան, քանի որ նրանք այդ խաղի հաճոյքը զրացել են աւելի քան հարկաւոր էր։ Յանկանում ենք միայն, որ պատկառելի տիկինը աւելի երախտագէտ լինի դէպի Բաքուի հայերը, քան գտնուեց Թիֆլիսցիներիս վերաբերմամբ և իր արուեստի բարոյական առաջադիմութիւնը գերազանց նկատմամբ առաւութիւնից։

ՆԿԱՏՈՒԹԻՒՆ

Հետզհետէ չէ այն ժամանակը, երբ նկարչութիւնն, ինչպէս և առ հասարակ գեղարուեստի ամեն մի ճիւղին ծառայելը մեր մէջ—Կովկասում, մանաւանդ հայերի մէջ համարւում էր անպէտք, ոչ և մինչև անգամ ծաղրելի և նախատելի բան։ Ժողովրդի այսպիսի սխալ հայեացքը անկարելի էր լաւ չը մնայ։ Քաղաքակրթութեան ազդեցութիւնը հետզհետէ մայրեց մեր մէջ և հանկագողութիւն գեղարուեստի նշանակութեան։ Մեր մէջ հետզհետէ սկսան երևալ մի քանի երևոյթներ, որոնք արհամարհելով ժողովրդի նախապաշարմունքները, սկսեցին համարձակ կերպով ծառայել գեղարուեստին, հասկացնել ու տարածել ամբոխի մէջ նէր դէպի գեղարուեստը։ Բայց պէտք է խոստովանած, որ գեղարուեստը և մասնաւորապէս նկարչութիւնը, ինչպէս առհասարակ ամեն մի նոր սկսուղ բան՝ չատ դանդաղ քայլերով է առաջ ընթանում։ Մենք այս երևոյթի գլխաւոր պատճառը դնում ենք նրանում, որ մեր՝ դէպի նկարչութեան սէր տածողները չունէին միջոց նախապատ կանոնաւոր գեղարուեստական կրթութիւն և ուղիղ հասկացողութիւն գեղարուեստի մասին։ Այս անհարները չը գիտենալով մասիսով կանոնաւոր գծել, ձեռք են առնում վրձինն ու ներկերը և մրոտում են պատառը այլանդակ ֆիգուրներով, անբնական տեսարաններով և այլն։ Օրինակ ևթէ այս պատրոնների մէկին պատերից նկարել մի որ և է տեսարան, նրանք կը նկարեն, բայց այն նկարի մէջ մենք դժար կը գտնենք կանոնաւոր նկար, թէպէտ առաջ ներկեր չատ կը տեսնենք։

Այս տխուր երևոյթը հետացնելու միակ միջոցը կանոնաւոր գեղարուեստական կրթութիւնն է և մանաւանդ այդ կրթութեան սկիզբը։ Անհրաժեշտ է, որ մեր այն մի քանի երիտասարդները—որոնք զրում են իրանց մէջ սէր կամ ձիրք դէպի նկարչութիւնը՝ ուշադրութիւն դարձնեն իրանց ապագայ գեղարուեստական կրթութիւնը կանոնաւոր և հմուտ նկարչի ձեռքի տակ։ Մեր մէջ տարաբախտաբար չը կան նկարչական դպրոցներ, եղածներն էլ միայն՝ Պետերբուրգի նկարչական ակադեմիան և նկարիչ ալ. Փիրոգովի մասնաւոր կուրսերը։

Մենք առիթ ունեցանք հետաքրքրանալու, որ ալ. Փիրոգովի աշակերտները արդէն սկսել են իրանց առաջադիմութիւնն նկարչութեան մէջ։ Վերոյիշեալ մասնաւոր կուրսերում, բացի դիպուկ նկարելը, որ կատարւում է չորեքշաբթի չորս անգամ, աշակերտները նկարում են և չորեքշաբթի մի անգամ ընդհանուր։

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Անցեալ կիրակի, մայիս 16-ին Թիֆլիսի աղնուականների ժողովարանում կայացաւ հայոց հրատարակչական ընկերութեան պարահանդէսը։ Ներկայ էր մեծ մասամբ հայ ինտելիգենցիան, հասարակութեան ուրախ, զուարթ մասը — երիտասարդութիւնը, և բաւական թւով հիւրեր, վրացիներ և այլն։ Դահլիճները լի էին հանդիսականներով։ Սրճակողմի կառավարչուհին ընկերութեան վարչութեան անդամ երիտասարդ իշխանուհի Մարիամ Թումանեանն էր, որ ոչ մի ջանք չէր խնայել հանդէսը չքեղ դարձնելու համար։ Նէ իրաւ, այս անգամ Ընկերութեան երեկոյթը առաջին փայլուն էր, քան երբ և է եղել է։ Մեծ դահլիճ մեծ անկիւնում չինւած էր մի փոքրիկ չքեղ աչտարակ, ուր հանդիսականները իրանց պարտական նւէրները ձգելով՝ ստանում էին մի մի սիւրպրիզ։ Միւս անկիւնում բարձրանում էր մինչև առաստաղ հնդկին էլֆելեան աշտարակը, ուր ութիկ Մանթաշեանն, յայտնի երգչուհի Պապայեան և զեղատեսիլ ռուս օրիորդ Տրիւնիխինան հերթով վաճառում էին քաղցրաւենիք և չամպանիա։ Պարերը սկսուեցին մօտ 11 ժամին և տեւեցին մինչև առաւօտեան 4 ժամը։ Պարող զոյգերը բազմաթիւ էին։ Կատիլիոնի իրերը յատկապէս բերել էին տուած Վիեննայից և ազգի էին ընդհնում հարստութեամբ և ճաշակով։ Միւս դահլիճում նւագում էր տեխական երաժշտութիւնը, որ մի քանի անգամ հրաւիրելով մեծ դահլիճ, նւագեց առանդական լեզգի պարը։ Սրիսրդ Շահինեանը և վրաց յայտնի պարող ալ. Կալանդարովը մեծ աշխուժով և գրացիայով մի քանի անգամ պարեցին կրակոտ լեռնականի կենդանութեամբ լի պարը։ Առ հասարակ հրեկոյթի չատ գործալի անցաւ։ Հայ արուեստիրատիայի բացակայութիւնը հանդիսի չուքին նպաստեց։ Հրեկոյթի ընդհանուր հասոյթը 1200 րուբլուց աւելի է։

ՄԱՆԻՐ ՂՈՒՐԵՐ

Այսօր, կիրակի քսանչորս երեք և կէսին Ցիներում՝ Վանքում, Մոդնում և Բեթղեհէմում ծխականները պէտք է ընտրեն չորս-չորս եւսափոխաններ, որպէսզի վերջիններս էլ ընտրեն հոգաբարձուներ Յեմիհանեան-Մարիամեան օրիորդական դպրոցի համար։ Քաղաքիս այդ ուսումնարանը նիւթական կողմից բոլորովին ապահով է, ուստի մնում է, որ բնակիչ, գործին տեղեակ և նւիրուած անձնաւորութիւններ։

Երեանում չատով բացակում է առևտրական բանկի ճիւղը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Ներկայ թիւականի «Յարաջի» № 1-ում յայտնել էինք, որ այդ №-ն էլ ուղարկում ենք «Յարաջի» անցեալ տարւայ բոլոր բաժանորդներին, սակայն ուղարկեցինք այդ №-ը միմիայն Թիֆլիսի բաժանորդներին, իսկ դրսի բաժանորդների համար արտատպեցինք միմիայն նմուշ այդ №-ից 1, 4, 5 և 16 երեսները ու մանրամասն յայտարարութեան փոխարէն բաժանեցինք Մշակի հետ։ Մենք փոխեցինք մեր որոշումը՝ 1.) Որպէսզի սկսել է բաժանորդագրութիւն և այն էլ չատ յաջող և կարող էր մեզ պակասել № 1-ը։

2.) Ձմարիտը խոստովանած, չը կամենանք մեր մշտական սովորութիւնից չեղել և ուղարկել №№ նրանց, որոնք չեն նորոգել իրանց բաժանորդագրութիւնը։

Տպագրւում է այժմ Լօնդօնում և մինչև Զատիկ Փահանակ վրայ Վերհատիան Նաթողիկոսի և յաւերժահիշատակ Գրիգոր Արծրունու պատկերները, իւրաքանչիւրը 3 րուբլի, իսկ «Աղբիւր-Տարազի» պատկերները արդէն ձեռք բերած բաժանորդի համար մի-մի րուբլիով։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԾԱՐԱՒՆԱԿՒՒՄ Է 1894 ԹՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XII ՏԱՐԻ **„ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ“** ՏԱՐԻ V

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՒՈՒՄ ԵՆ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ, ԾՐԱԳՐՈՎ ԵՒ ՀԱՅ ՅԱՅՏՆԻ ԳՐԱԿԱՆ ՈՅԺԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

«ԱՂԲԻՒՐԸ» լոյս է տեսնում ամիսը մի անգամ՝ 2—3 թերթ, տարեկան 12 №№, իսկ «ՏԱՐԱԶԸ» շաբաթը մի անգամ, կիրակի օրերը 1—2 թերթ, տարեկան 50 №№

„ԱՂԲԻՒՐԻ“ *տարեկան գինը (առանց պրեմիաների)* 3 *ր. է, իսկ*

„ՏԱՐԱԶԻՆԸ“ *(առանց պրեմիաների)* 6 *ր.*

„Աղբիւրի“ նպատակն է

Հայ մտաւոր սերնդի մէջ զարթեցնել պատմասիրութեան զգայմունքները, զարգացնել հայ երեխաների մէջ սէր դէպի շրջապատողները, բարի նախանձ դէպի ամեն վսեմը, ազնիւը և ստեղծիչն դէպի ամեն մնաստակարն ու չարը։

«ԱՂԲԻՒՐԻ» ակնները հոսում են ժողովրդական հէքեաթներից, զրոյցներից, խաղերից, ասանդութիւններից, որոնք ոտոգելով մեր վաթրիկ և քաղցր ընթերցողների սիրտը և հոգին, պարարտ հող պէտք է պատրաստեն ապագայում պտղաբեր սերմեր ամեցնելու։

«ԱՂԲԻՒՐԻ» ամեն համարում տալու են հետաքրքրութիւններ մեծ մարդկանց, տեղագրական նամակներ մեր երկրի և վայրերի, հէքեաթներ, բանաստեղծութիւն, խաղեր, հանելուկ։ Մանկական հասակին յարմար շատ պատկերներ։

Պատկերազարդ „Տարազը“

Կը հաւաքենք նկարների կոմից մայրաքաղաքներում հրատարակուղ շաբաթաթերթերի ճոխութիւնը։ Բոլանդակութեան կոմից պատկերազարդ «ՏԱՐԱԶԸ» ճոխ կը լինի և բազմակողմանի։ Վիպական մասը որ պատկերազարդ «ՏԱՐԱԶ»-ում նկարների հետաքրքիր առաջին տեղը կը բռնէ, կը տալագրուին մի շարք պատմական և ժամանակակից վէպեր, հանգուցեալ ՐԱՖՖԻ, նրա թողած թանկագին ձեռագրերից պ. պ. Պոլշեանցի, Աղայեանցի, Շիրվանզադէի, Լէօի և ուրիշների։

ԳԵՂԱՐԻՏՍՏԸ լինի նա արտայայտած բանաստեղծի վսեմ շրթունքով, հրաշագործ նկարչի վրձինով, թէ սիրտ արտիացնող վիպագրի գրչով «ՏԱՐԱԶՈՒՄ» առաջին տեղը պիտի բռնէ։ Քննադատութիւն մեր առօրեայ կեանքի լինի նա արտայայտած վիպով, պատմածով, ֆելիետոնով, թէ կատակով «ՏԱՐԱԶԻ» գրական մասը պիտի կազմէ։

Կանանց խնդիրը, լուսաւորեալ և մեր աշխարհի կնոջ վիճակը, դրութիւնը արդի ընդհանուր դրականութեան մէջ տիրապետող այդ խնդրի վերաբերեալ վիճաբանութիւնների հետեանքը պարբերաբար կարձանագրուին Տարազում։

Տարազի մի երրորդական մասը կը կազմեն պատկերներ, նկարներ, տեսարաններ, թէ արդի և թէ անցած գնացած, գլխաւորապէս մեր կեանքի։ Հայ կինը ամեն ամիս Տարազում կը գտնէ եւրոպական նորագոյն կար ու ձևի, ձեռագործի վերաբերեալ նկարներ բացատրութիւններով։

Հասցէն՝ Тифлисъ, ред. „Агбюръ“ *կամ* „Таразъ“, *իսկ արտասահմանից՝* Tiflis (Caucase) Red. „Agbur“ *կամ* „Taraz“։

Խմբագիրը—Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

„Ա Ղ Բ Ի Ւ Ր—Տ Ա Ր Ա Զ Ի“

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ

վաճառւում են

ԲԱՑԱՌԱՊԷՍ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Ա Ղ Բ Ի Ւ Ր Ի»

1. *Տիեզերահռչակ* ՌԱՓԱՅԷԼԻ *Պրէզդինեան պալէրէյի Մադոնայի եւ Տրեչաների վարպետի պատճէնները լուսա-օլիոգրաֆիա եւ լուսա-ֆոտոտիպ չորս պատկեր։*

2. ՐՈՒԲԷՆՍԻ՝ *Ձիասուս եւ Տիրամայր երկու լուսա-օլիոգրաֆիա։*

«Տ Ա Ր Ա Զ Ի»

3. *Մի շատ գեղեցիկ ակւառել լուսա՝* «ԲԵՐԿՐԱՆԴ» *պատկեր։*

4. ՇԷՔՍՊԻՐԻ *Օթէլլօ եւ Ջուլիէթի պիէսից (օպէրայից) մի թատրոնական նկար լոյսի դէմ կախելու։ Կարող է ծառայել եւ շրթել էկրանի դրացի լամպի դէմ։*

Ընդամենն ուր պատկեր ձանապարհածախսով արժեն 5 րուբլի

Дозволено цензур. Тифлисъ 22-го января 1894 года.

Скоропечатня М. Мартиросянца и К°. Мих. ул.